

**Սրագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի մամլո ասուլիսը՝  
պաշտոնավարման 100-րդ օրվա կապակցությամբ**

Լրացավ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի պաշտոնավարման 100-րդ օրը, որի կապակցությամբ հրավիրվեց մամուլի ասուլիս: Զանգվածային լրատվամիջոցներից բացի, ասուլիսին ներկա էին մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Հրաչյա Գետրոյանը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, մարզի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մարզպետը ընդհանրացրեց իր պաշտոնավարման առաջին 3 ամսում իրականացված աշխատանքները, նշելով, որ ինչպես մարզը, այնպես էլ մարզի ղեկավարի աշխատանքը իրեն քաջածանոթ են, եւ այդ առումով գործառույթները ստանձնելու անցման շրջանը դյուրին է եղել:

Գաբրիել Գյոզալյանը ըստ ոլորտների ներկայացրեց մարզում իրականացվող աշխատանքներն ու առաջիկա ծրագրերը: Նշեց, որ մարզը հիմնականում գյուղատնտեսական է, եւ խնդիրներն էլ առնչվում են առավելապես այս ոլորտին:

Ելնելով խնդիրների կարեւորությունից, երեք անգամ կայացել է ՀՀ գյուղնախարարի այցը մարզ: Այցելություններ են ունեցել համայնքներում, եղել են Կոշի Գոլդեն գրեյպ Արմաս, Սասունիկի Վան-Արբի եւ Արմենիա վայն, Ոսկեվազի Հայասի գրուպ՝ գինիների, Կարբիի Թամարա ֆրուֆ եւ Կարբի ֆրուֆ՝ պահածոների գործարաններում: Լինելով միջազգային չափանիշերին համապատասխան ձեռնարկություններ եւ ունենալով արտադրական լավագույն ներուժ, այդ ընկերությունները էական նշանակություն ունեն մարզի գյուղատնտեսության զարգացման, աշխատատեղերի ստեղծման, գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործում:

Մարզի ընդհանուր հողերը կազմում են 275 հազար 632,1 հա, որից գյուղատնտեսական՝ 218 հազար 223.4 հա: Ցանքատարածությունները 2016

թվականին 2015թ. համեմատ ավելացել են 1500 հեկտարով, իսկ բազմամյա տնկարկները՝ մոտ 200 հեկտարով: Գյուղացիական տնտեսություններն օգտվում են կառավարության կողմից տրամադրվող պարարտանյութի, դիզվառելիքի, սերմացուների տրամադրման ծրագրերից: Ըստ այդմ՝ այս տարի տրամադրվել է 3300 տոննա պարարտանյութ, 450 հազար լիտր դիզվառելիք, 300 տոննա աշնանացան ցորենի, 260 տոննա գարնանացան գարու սերմացու:

Անդրադառնալով կրթության ոլորտին, մարզպետը նշեց, որ առաջին իսկ օրվանից ուսումնասիրություններ են իրականացվել հանրակրթական դպրոցներում եւ նախադպրոցական հաստատություններում: Մի շարք բացթողումներ են արձանագրվել, որոնց շտկման համար հստակ ժամկետ է սահմանվել: Հետեւողական աշխատանքի արդյունքում բացթողումներն էապես ուղղվել են: Աուդիտի արդյունքում 2322 հազար դրամ գումար վերականգնվել է պետբյուջե:

Նկատելի առաջընթաց կա սոցիալական եւ առողջապահության ոլորտներում՝ ֆինանսական խնդիրների կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, սոցիալական ոլորտում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բացահայտված շուրջ 78 մլն. դրամի խախտումները վերականգնվել են գրեթե 96%-ով, իսկ առողջապահության ոլորտում կուտակված պարտքերը կիսով չափ մարվել են: Նշված գործընթացները շարունակական եւ կարճ ժամանակում լիարժեք լուծում կստանան:

Անդրադարձ եղավ նաեւ հրատապ ծրագրի շրջանակում համայնքներում իրականացվող խնդիրներին: Մարզպետը նշեց, որ համայնքներ կատարած այցելությունների եւ բնակիչների հետ հանդիպումների ժամանակ առանձնացվում են տեղերում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները: Դրանք հիմնականում վերաբերում են ոռոգման եւ խմելու ջրի մատակարարմանը, ճանապարհների, հանրային նշանակության կառույցների վերանորոգմանը, գազիֆիկացմանը, որոնք էլ, ըստ առաջնահերթության, ընդգրկվում են հրատապ ծրագրում եւ ներկայացվում կառավարություն:

Մարզպետի ներկայացմամբ՝ համայնքների սեփական եկամուտները 996 մլն. դրամ են, որից առ այսօր հավաքագրվել է 278-ը /28%: Նախորդ տարվա համեմատ այն ավել է 9,81 մլն.-ով:

Մարտ ամսից մինչև հունիսի 9-ը ներառյալ կատարվել է քաղաքացիների 15 ընդունելություն, որոնց մասնակցել է 188 քաղաքացի: Ընդհանուր առմամբ, տրվել է 4 միլիոն 365 հազար դրամ: Քաղաքացիների ընդունելություն կատարվել է ոչ միայն մարզպետարանում՝ ամեն ուրբաթ օրը, այլև այդ նպատակով մարզպետն այցելել է համայնքներ եւ տեղերում ընդունել բնակիչներին:

ԶԼՄ ներկայացուցիչների կողմից մարզպետին հարցադրումներ եղան խմելու եւ ոռոգման ջրի մատակարարման, հրատապ ծրագրերի, համայնքների խոշորացման, մարզկենտրոն Աշտարակ քաղաքի բարեկարգման, մշակութային եւ երիտասարդական հարցերի, կադրային քաղաքականության վերաբերյալ եւ ստացան սպառիչ պատասխաններ:

«Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին